



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

hemp

Lucy

876

Въ библіотекѣ Государственнаго Императорскаго
Университета въ Москвѣ.

Отъ Копенбургскаго Императорскаго
Секретаря К. Е.

Васильева.

1858.

2011

[Faint handwritten text]

[Faint handwritten text]

[Faint handwritten text]

[Faint handwritten text]

[Faint handwritten text]

1105

318
5

[Faint, illegible handwriting]

[Faint, illegible handwriting]

[Faint, illegible handwriting]

[Faint, illegible handwriting]

Հր. ճն. Լազարյան.

№ 28-1

Ուս. Ար. Լազարյանի կողմից.

17.925)

876



31 AUG 2007

Այ.

Հ Ա Յ Ե Բ

ԹԱՐԳՄԱՆԵՍՅ

Ի ԳԵՐԾԱՆԱԿԱՆԷՆ

Պ ԶՈՒՆԳ

ՓԱՐԻԶ

1857-ՈՅԷ

12871



(285)

UNIVERSITY OF PARIS

UNIVERSITY OF PARIS


UNIVERSITY OF PARIS



4993
38

g
846-2011
h. f. 872

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Իրկէնցուկս պլէթթէր գրբին մէջ Ազգերնուս վրայ գրուած յօդուածին գերմաներէնէ թարգմանութիւնս, որնոր երկու տարի յառաջ շարուած և արևելքին խառնանուելուն պատժառներովը ըյս ընծայուած չէր. այս անգամ քանիմը ազգասիրայ առաջարկութեամբը տպուելու հաւանութիւնս տուի՛ յուսալով որ իրաւամբ նոյնը օգտակար հրատարակութիւն մը ըլլայ սիրելի համազգեսացս : Ասոր նման գրուած մը, Մ. Տիւլօրիէ. րովիս դէ դեօ Մ'օնդին մէջ հրատարակած է, որն որ փոքրի շատէ Ազգերնուս ծանօթ է, և իրեն արժանաւոր և հրապարակաւ շնորհակալութեան ալ արժանի եղաւ. ուստի ներկայ յօդուածս իրեն անուշ համաուօտութենէն, ճիշտ, պատմագրական և քանի մը շատ նոր ու արդարացի խորհրդածութիւններէն զատ եթէ ուրիշ առաւելութիւն մը չունենայ ալ, ան ընդհատ և աշխարհարատ տպուելովը, կը յուսամ որ աւելի ան կարևորութիւնը կրնայ ունենալ, զորն որ Մ. Տիւլօրիէինը իրեն ճապաղ ընդարձակութեամբը, երկայնժամանակեայ ընդհատութիւններով և գրարատ հրատարակուելովը հարկաւ կորանցուցած է : Արդեօք երախտագիտութեան պարտք մ'ալ չէ՞ մի, որ այսպիսի փիլիսոփայ և մեծ ազգի մը մէջ ազգերնուս վրայ յաջող գաղափարներ տարածօղ անձին գրուածը կարգացուի մեր մէջը շնորհակալութեան զգացմամբ : ՂԺբախտաբար հեղինակին ճիշտ ու լլալը մեզի անծանօթ է, բայց ոճին նայելով որն որ հարաւային Քերմանիոյ լեզուին

գունաւորութիւնը և դարձուածները ունի, կարծեմ չենք սխալիր թէ որ նոյնը Միւնիսենի արքունի մատենադարանին այժմեան տեսուչ Հայազէտ և Հայասէր Պ. Նայմանին ընծայենք, որն որ Հայոց գրականութեան վրայ գրած ուրիշ սքանչելի և մեծահատոր աշխատութիւնովը արդէն գերմանական գրագիտութիւնը հարստացուցած է, և մեր նախնեաց մտաւոր պարծանքներն իրեն ազգին ձանչցուցած : Ասիկայ կարծիք է և իրրեւ հաւանականութիւն միայն կուտամ. բայց մտադիւր դիտողութեան մը վրայ յենլով, կրնամ իրրեւ ստոյգ երաշխաւորել թէ Եւրոպայի քաղաքականացեալ բոլոր ազգաց մէջ երբէք մեր ազգին վրայ դադափարները այնպէս ճիշտ և ծանօթութիւնը այնպէս ընդհանրական չեմ գտած ինչպէս Գերմանիկ ազգին մէջ, և այս տեղեկութիւննին ալ ոչ այնչափ մեր ազգային աշխատասիրութեան և գործունէութեան արդիւնքն է որչափ պարզապէս իրենց ուսումնասիրութեանէն, դէպ ի Հայաստան ըրած քրտնաջան ճամբորդութիւններնէն, և մեր ազգին վրայ յատուկ սէր և մեծարանք մը ունենալնէն միայն յառաջ եկած է : Այժմ կը պարծի Գերմանիա և մեր իսկ ազգովին երախտագիտութեանը արժանի են Երէօտէր, Շիլլէր, Վօլֆ, Րիդդէր, Բէդէրման, Վակնէր, Նայման... և այլն այլն բազմաթիւ հեղինակներ և բանագէտներ, որոնց խորաքննին դիտողութիւնները և ազգերնուս վրայ սիրայորդոր գրուածները ծանօթ և սիրելի ըրած են մեզ իրենց և ազգին միանգամայն : Բայց ասոնց վրայ թերեւս ըսնազոյնա ուրիշ անգամ գրելու պատեհ և առիթ կունենամ :

Զունդ.

Հ Ա Յ Ե Ր



Հայոց ժողովրդեան հիմակուան վիճակը հետեանք մըն է ան գործքերուն, որոնք որ իրեն առաջուան անկախութեան ժամանակին փոփոխութիւնները կացուցին : Անոր համար որպէս զի Հայոց այժմեան սլատմութիւնը աղէկ հասկցուի, հարկաւ պէտք է որ ելլենք իրեն կանխաւոր ժամանակները յիշատակենք, որոնց մէջ իր անկախ ազգայնութիւնը կորսնցունելու նախ սկսաւ, մինչև որ քանի մը անգամ պարծանօք և քաջութեամբ նորէն ոտք ելլալէն ետքը, վերջապէս տասնև չորրորդ դարուն մէջտեղերը, Եզիպտացւոց Սուլթաններուն հարուածներու տակ բոլորովին և ընդ միշտ ընկճեցանելուն եզաւ : Հայաստանեայց աշխարհը ընդ ամէն ուղղութիւն լեռներով և գետերով բաժնուած ըլլալուն համար, որոնք ամէն գլխաւոր բնակութեանց մէջտեղերը անջատող բնական սահմաններ կը կացուցանէին, մեզի յայտնի կը ցուցընէ թէ ինչո՞ւ ի սկզբանէ ի վեր սա երկիրը այլև այլ

բաղմամբիւ նախարարութեանց բաժնուած էր, որոնք միօրինակ իրենք զիրենք թագաւորական իշխանութենէ անկախ ընել կը ջանային : Հայոց միապետութեան յօրինուածին մէջ միութեան կապի մը պակսիլը, իրենց ազգի ազգի ներքին խռովութեանց առիթ եղաւ, խափանեց զարգացումը, և այնու երկիրը արտաքին թշնամեաց դէմ անզօր տկար ըրաւ : Ինքը գրեթէ միշտ չըջակայ յաղթ պետութեանց հպատակ էր. հարաւային կողմը Ասորեստանեաց եւ ետքը Արաբացոց. ընդ արևելք Պարսից. արևմտեան դին Բիւզանդիայի կայսերութեան. իսկ դէպ ի հիւսիսոյ կողմը Մոնկոլներուն : Մեծն Աղեքսանդրէն հնազանդուած, բաւական ժամանակ Սելեկեանց ընդդիմացաւ. ետքը Պարթևաց ձեռքն ինկաւ, և Արշակունեաց կրտսեր ճիւղին տակ թերևս բարձրակալ բարգաւաճութիւն մը ստացած կ'ըլլար, թէ որ Տիգրան՝ աս միահեծան պետութեան ամենայաջողակ իշխանը Հռովմայեցոց սուրին տակը յաղթահարուած չըլլար (1) : Կոստանդիանոսի և Սասանեանց մէջ եղած երկարատև և ահագին պատերազմներու ժամանակ, Հայաստան ճակատներու ասպարէզ մը եղաւ, որուն մրայ աս զօրաւոր նախանձորդները Ասիայի իշխանութիւնը ձեռք ձգելու համար մէկզմէկու դէմ ի վէգ կուգային : Երբոր վերջապէս

(1) Հեղինակը աս կտորիս մէջ կը հետեւի Յուստինիանոսի, Տակիտոսի, Տիտոս Լիւիոսի եւ այլ ուրիշ արտաքին պատմագրաց : Ծանօթութիւն թարգմանչին :

Սասանեանք զեր ի վերոյ գտնուեցան, Չանային որ ազդին անկախութեան ետքի նշմարանքներն ալ բնաջինջ ընեն : Քրիստոնէութիւնը՝ զորն որ Հայք կետարիայէն առած էին, իրենց յունական դրականութեան ունեցած ճաշակը, իրեց Հռովմայեցոց օրէնսդրութիւնները՝ շարունակ Սասանեանց կասկածելու տեղի կուտային : Բազմապա, տիկ և ահագին սպաստամբութիւններէն ետքը, վերջապէս ժողովուրդը զինու զօրութեամբ խզմտանայ ազատութիւնը վաստկեցաւ : Անկէց ետքը Արարացոց իշխանութեան տակ ինկաւ, սակայն Մոթէվաբէէլ խալիֆը (1) Բաղրատունեան նախարարութենէ Աշոտ անունով Հայու մը յորդոց յորդիս ժառանգութեամբ տէրութիւնը տարով, ազգը նորէն անկախ ինքնիշխան եղաւ : Բաղրատունեաց միահեծան Պետութիւնը դրեթէ երկու դար տևեց, այսինքն 885 էն մինչև 1079 : Երբոր Բաղրատունեաց վերջին թագաւորը խաբկանօք Բիւզանդիա կանչուեցաւ և բռնուեցաւ Թիւրքերը (2) արշաւեցին Հայաստանի մէջ, որոնց հետ-

(1) Ազգային պատմութեան մէջ Մարտամ կը յիշատակուի, որ նաեւ Ահմէտ եւ Չափր ալ կ'անուանուի : Մ. Թ :

(2) Թիւրք, Թիւրքոման, Սկիւթացի, Թաթար անունները եւ ասոնցմով նշանակուած ազգերը, որոշ եւ ճիշտ տեղեկութիւն մը վրանին պակասելուն համար, թէ՛ արտաքիններուն եւ թէ՛ մեր մէջը կը շխտին : Մենք հեղինակին մէջ « քիւրքէն » բառը գտնելով, Թիւրք դրինք : Մ. Թ :

և եցան ետքը նաև Մոնկոլները : Թխւրերուն
առջի յարձակման ժամանակ, Ռուբէն քաջասիրտ
հայազգին, իր հայրենիքը թող տաղաւ ատկաւեւրով :
Տարոս լերանց կրճերուն մէջ փոքր Հայաստանի
թագաւորութիւն մը հիմնեց, որ Խաչակրաց պատ-
մութեան մէջ շատ տեղի կը բռնէ, և որ 1375
թուականին վերջացաւ : Իսկ մեծ Հայաստանը,
տասնևչորրորդ դարուն մէջ տեղերը, երբոր Մոն-
կոլներուն տէրութիւնը մասնական առանձինն
փոքր տէրութիւններու բաժնուեցաւ՝ այլ և այլ
տէրութեանց տակ ինկաւ : Մարք կամ Քիւրտք
իշխանապետութիւն մը հաստատեցին հարուային
կողմը, որն որ այլ և այլ իշխաններու (պէյերու)
մէջ բաժնուեցաւ : Պարսիկք արևելեան գաւառնե-
րը, և Օսմանեանք արևմտեան երկիրները գրաւե-
ցին : Եստ տեսակ աւերութիւններէ ետք, որն
որ (լանկ) Թամուր աւ երկրին վրայ բերաւ, Հայաս-
տան՝ դարձեալ վերոյիշեալ վիճակին մէջ մտաւ :

Տաճկաց Սուլթաններուն և Պարսից Եաշին
մէջ եղած պատերազմը, թշուառ Հայաստանի
աղէտից և դժբախտութիւններու նոր ժամանակ
բացաւ : Իր աշխարհագրական դրիցը համար ամէն
չրջակաց մեծ տէրութեանց կռիւներուն դաշտը և
գոհը էր : Երբեմն Տաճկաց՝ երբեմն Պարսից տէրու-
թեան տակը կ' իցնար, և տա ամէն փոփոխու-
թեանց ատեն դառնադառն կրեց, որոնց վրաց
Քիւրտերուն իշխանն ալ՝ երկրին վրայ ամէն
իշխողին գէմ ապստամբելովը, իր կողմէն ալ նե-
զութիւնները կ' աւելցընէր . Բացց Հացոց համար
սակնաթշուառ պատերազմ՝ Եաշ Արսու առաջնայն

Ահմէդ առաջինին դէմ ըրած պատերազմն եղաւ. Թշնամուոյն արշաւանքը ազդու եղանակաւ մը խափանելու համար, որոշեց Շահ Աբաս, ամբողջ Հայաստանը քանդել անապատ դարձնել : Ուստի ուր ուրոյն բոլոր գաւառները զօրօք գործակալներ իրկուեցան, որոնք պատուէր առերէին բնակիչքը բռնութեամբ խաղաղընել և քաղաքները հրոյ ճարակ տալ : Աս հրամանը տալու ստեն կրկին էր Շահ Աբասայ նպատակը. այս ինքն է, մէյմը անով Տաճկաց արշաւանաց արգելք դնել և երկրորդ իր ազբատցած երկիրը գործունեայ և աջողակ ժողովուրդ մը գաղթական բերել : Հրամանները տակաւին յականջալուրս չեկած և դեռ չտեսնուած բարբարոսութեամբ ի գործ դրուեցան . 24,000 գերդաստանէն աւելի Հայ իրենց հայրենիքէն բռնի կորզեցան , և ճեպընթաց արագութեամբ արք, կանայք, ծերք ու տղայք Պարսից աշխարհը քշուեցան : Մէկ մասը ճամբուն վրայ կամ խոնջութենէ և կամ գինուորաց թուրերուն տակը մեռաւ, մեծագոյն մասն ալ առատացած Երասխայ ալեացը մէջ ընկղմեցաւ : Պարսից և Տաճկաց մէջ Հայաստանի համար վերջին սրտտերազմ եղաւ ան պատերազմը, որն որ Նատըր Շահ 1746 թուականին յաղթութեամբ ընցուց : Անկէց սկսեալ առանց ընդմիջելու ութսուն տարի խաղաղութիւն եղաւ, այնպէս որ, երկիրը կարօղ եղաւ քիչ մը ողի առնուլ, բայց ան ալ այնչափ, որչափ որ Քիւրտերը, Տաճկաց և Պարսից կուսակալները կը ներէին : Աս ժամանակիս մէջն ալ ազգին գաղթականութիւնները անընդհատ շարունակուե-

յան, որն որ արդէն իսկ տասն և մէկ դարուն վերջերը Խոխմ, Պողոնիա (1), և Ասապից ծովուն գէպ ի հիւսիսային կողմերը հատուած երթալու սկսեր էր : Նաև իր հին և առաջուան ստղարերու թիւնը երբէք չիկրցաւ Հայաստան նորէն ձեռք բերել, որովհետև ջրաբաշխները ուսկից երկրին բարերերութիւնը կախուած էր՝ աւրուեր ասպականեր էին :

Արդ առ երկայն հանգստութիւնը միւսանգամ վրդովելու պատճառ եղաւ Ռուսաց և Պարսից մէջ ծագած պատերազմը : Աս պատերազմի առեներ Հայերը շատ կրեցին, որովհետեւ Պարսիկը Եկրմնլոֆ և Պասքեիչ զօրագետներէն կրած ջարդերնուն վրէժը՝ Հայոցմէ կը հանէին : Թիւրքմանչայի խաղաղութեամբ որ 1828 (մետրուար 22 ին և մարտի 5 ին եղաւ), Պարկաստան Աուրե Երաս խգետերուն մէջտեղը եղած Հայաստանի բոլոր երկիրը կորսնցուց, այս ինքն Երեւանայ եւ Նախջուանայ կուսակալութիւնները (խանութիւն), Մուղան գաշտագետինները մինչև Լանքեարան նաւահանգիստը : Պաշնագրութեան տասնևչորրորդ հատուածին մէջ որոշուեցաւ թէ երկու տէրութեանց հպատակներն (2) ալ, որ միւս կողմի երկիրը անցած են կամ անկէջ ետքը պիտի անցնին, ազատ ըլլան ամէն ուղած տեղերնին երթալ ընակիլ, ուր որ ալ որ Տէրութիւնը որուն որ պաշտպանութեան տակը

(1) Լեհաստան :

(2) Պաշնադրութեան մէջ որոշակի գրուած է « բրխտունեայ հպատակները » : Մ. Թ. :

ըլլան, զիրենք տեղաւորէ : Անկէց անմիջապէս
ետորք, Տաճկաց զէմբրած սլատերազմներուն մէջ,
Ռուսը Անարա, Բոսի և Կոստնց վերաբերած Սե-
ծովուն եզերքները, նաև Ախլայխայի եզարքոսու-
թեան մեծազոյն (1) մասը վատորկեցաւ, հաստա-
տակներուն համար դադարեցաւ ազատութիւնը :
Թիւրքման չայի և աւ Ազրիանուստըսոյ դաշնադրու-
թիւններովը Պարսից և Օսմանեան Տէրութիւնները
չէ թէ միացն երկիր կորսնցուցին, այլ նաև հայկա-
զեան սերունդէն շատ ալ ժողովուրդ, որոնք երան
Ռուսաստան չուեցին : Ռուսը ժողովուրդը իր
տէրութեան մէջ քաշելու համար, Նախջուան և
Երևան գաւառներուն և Պարսապաղի մէջ իրենց
քնակութեան տեղիներ կուտար, որոնք Տէրութեան
գանձը միայն տասանորդ մը տալով, տասը տարի (2)
ուրիշ ամէն տեսակ հարկերէն ապահարկ էին : Աս
հրապուրիչ սրայմաններուն քով, ուրիշ տեսակ առա-
ւելութիւն մըն ալ կար, որն որ առջինին պէս Հայոց
վրայ մեծ ազդեցութիւն ունէր, այս ինքն է, իրենց
Եկեղեցոց դիտուն՝ Ռուսաց առած մասին մէջը
գանուիր : Կայսրը նայեցաւ հոգ տարաւ որ,
իր Տէրութեան նոր սահմաններուն մէջ պար-
փակէ Հայոց Կաթողիկոսին աթոռն Էջմիածնայ
վանքն ալ, որն որ իրենց հաւատքին սուրբ տեղին
է, և ուր Աստուածորդին Հայոց Առաքեալ սուրբ
Պրիգոր Լուսաւորչին երևնալուն համար՝ նուիրա-

(1) Պատի ըլլաց փոքրազոյն մասը : Ծ. Թ. :

(2) Պատի ըլլաց քսան տարի : Ծ. Թ. :

կան տաճար մը եղած է (1) : Արախայի ժողովուրդեան աս գաղթականութիւնը աւելի ազգային կերպարանք մը ունենայ, անոր խնամքը և վարչութիւնը Հոյազգի տնձի մը, այս ինքն Ղազար ԼազարէՔ Պնդապետին յանձնուեցաւ, որն որ իր բարձր աստիճանին, մեծ հարստութեանն, և իր ազգատոհմը Ս. Բէգերապուրկիարքունիքը ունեցած չութիւն պատճառաւ մեծ ազդեցութիւն ունէր : Քրիստոնէից Պարսկաստանը թող տալու յօժարութիւնը այնպէս մեծ էր, որ 1828 ին Յունիսի 11էն մինչև Յունիսի 23ը Ատրպատականէն և դիտաւորարար Մարաղա, Սալմաս և Արմիա կուսակազութիւններէն 8249 ընտանիք Առուսայ երկիրը անցնելու տճապարեցին : Եթէ աս կորուստը Շահին գանձին տարեկան եղած վնասին վրայ հաշուելու ըլլանք, տարին 100,000 թուման կամ 1,600,000 թալէր կըլլայ (2) : Իսկ Օսմանեան տէրութենէն գաղթողներուն թիւը, որ Արիտ չային վրայէն տնցան, աւելի բազմաթիւ էր, որովհետև տոանձինն Կարնոյ, Կարսի և Պայաղխոյ ետարքոսութիւններէն միայն 70,000 Հայ երան Առ-

(1) Էջմիածին անունը՝ Ս. Պրիգոր Լուսաւորչայ եղած հրաչալի տեսիլքը կ'ակնարկէ. որովհետև աս բառս իրենց հայերէն լեզուովը կը նշանակէ Միածին Արդին ինչաւ : Մանօթութիւն Հեղինակին :

(2) Ըսել է թէ տարին 25,160,000 զուրուչ կամ 50,320 տոպրակ : Մ. Թ. :

սաստան չուեցին : Կարնոյ առաջնորդ Կարապետ
Աբբ եպիսկոպոսը աս քաղքին զրեթէ բովանդակ
քրիստոնեայ բնակիչքը առաւ հետը մէկուեղ տարաւ :
Պաղթօղներուն մեծ մասը որ կէս մը զօրաւոր
երկրագործ և կէս մը գործունեայ աշխատասէր
վաճառականներ էին, Վրաստանի սահմանները
կամ Արմրի քաղքին շրջանակները զետեղեցան,

Ռուսոյ Հայաստանը որ Կովկասեան աշխարհին
մասը կը համարուի, Տաճկաստանէն և Պարս-
կաստանէն առնուած երկիրներէն զաս մէջը կը
բովանդակէ նաև վերին Հայքը, զորն որ Կատարի-
նէ Բ. 1783ին Էրէկլի (1) խան ըսուած Քարթլի
և Կախէթի թագաւորին ձեռքէն առաւ : Արդ հա-
րաւային սահման է իրեն Երասխ գետը, և դէպ ի
հարաւակողմը աս գետէն սկսեալ մինչև Արարատ
կը ծաւալի. արևմուտքէն Կարնոյ եպարքոսութեամ-
բը կը բաժնուի . իսկ դէպ ի արևելք Մուղան
գաշտավայրներովը մինչև Կասպից ծովը կը տա-
րածի : 1828 մարտի 9 (21) կայսերական հրովար-
տակով իրեք մաս կամ կուսակալութիւն բաժնուե-
ցաւ, որ են Երևան, Նախջուան և Որտուպատ :
Օսմանեան պետութեան Հայաստանն ալ իրեք
կուսակալութիւններ (էյալէք) բաժնուած է, զորոնք
մեծ եպարքոսի (վէլիի) ատրիճան ունեցող եպար-
քոսներ կը կոտախարեն, և են, նախ՝ Կարին կամ
Էրզրում հանդերձ Չըլսըր, Կարս, Վան և Մուշ
գաւառներով. երկրորդ՝ Տիգրանակերտ կամ Տխար,
պեքիբ, երրորդ՝ Խարբերդ՝ Արարիկեր և Մալա-

(1) Հերակլ Բ. Մ. Թ. :

Թիա գաւառներով : Եթէ Օսմանեան Հայաստանի մաս Փոքր Ասիոյ երկիրներն ալ համարուին, որոնք յառաջագոյն Հայաստանի մասեր էին, ան ատեն պէտք է վերոյիշեալ կուսակալութեանց վրայ աւելցնել նաև Ատանայի կուսակալութիւնը՝ Պօզուք և Սերաստիա : Իսկ Պարսից ձեռքը մնացած Հայաստանի մասը, Երասխ գետին աջ կողմեան եզերքը կ'իցնայ, քիչ տարածութիւն ունի և Ատրպատականի հետ միացած է : Հայաստանի արեւմտեան և հարաւակողման լեռներուն վրայ Թուրքմանները և Քիւրտերը մէկ լեռէն մէկալ լեռան մարդերուն վրայ կը թափառին և իրենց տուարածական կենացը հետ միանգամայն ելուզակութեան ընաւորութիւնը կը սպահեն : Եստ տեղեր կ'երևայ որ, Հայերն ալ Քիւրտերուն հետ դանդուած միացած են, և անոնց աւազակութեան սովորութիւնն ալ առած :

Թեպէտև Հայաստան հարաւային Սպանիոյ և Նարոլիի թագաւորութեան հետ լայնութեան նոյն աստիճանին տակն է, այսու ամենայնիւ իրեն օղաբաժինը (գլխուս) աս երկիրներու օղէն շատ տարբեր է : Լեռներու շղթաները որ ընդ ամէն ուղղութիւն բոլոր երկրին մէջ կը տարածուին, նոյնպէս մօտաւոր կովկասու լեռները՝ իրենց սառնասպառ ձիւնաթաղ գազաթներովն թանձրամած մշուշովն Հայաստանեայց բարձրագաւառներուն բարեխառնութիւնը զգալի եղանակաւ կը նուազցնեն : Հայաստանի բարեխառնութեան նկարագիր յատկութիւններն են, երկարատեւ ձմեռն և գոնուած լայնութեան աստիճանին նայելով խիստ ցրտութիւն . (բարձրա-

դաւաաներուն մէջ ցրտաշունչ հով մը կը փչէ եօթը մինչև ութը ամիս) դարձեալ կարճատեւ, չոր եւ յարաբերութեամբ շատ տաք ամառ. եղանակաց, օդափոխութեան, ամպրոպաց եւ ցրտութեան արագ փոփոխումն, շատ կարճ գարուն եւ աշունք. հողմերու յաճախ փոփոխումն եւ աստիկ մրրիկներ (1) : « Հոս տեղի հարաւային հողմը վնասակար չէ ինչպէս Եգիպտոսի եւ Ասորոց մէջ. սակայն աս երկրին սրտուհասը կը համարուին արեւելեան քամիները որ Եէրբի կ'ըսուին եւ ձմեռը դառնաշունչ եւ թափանցող են իսկ ամառը ջերմ եւ լիկեցուցիչ, որոնք նաև ահագին աւաղի ամպեր կը հանեն եւ անով աչքի վնասակար են : Դարձեալ Հայաստանին իրեն նկարագիր յատկութիւն մը յիշատակելարժան է, թէ հոս առանց արուեստական ոռոգանութեան մշակութիւնը, դաշտ եւ պարտիզի պտուղները գրեթէ ամենեւին չեն յաջողիր : Ամառուան շարունակ տօթը եւ երաշտութիւնը հարթ երկիրներուն բոլոր ընդեղէնները եւ բանջարը չհասունցած կը չորցնէր, պտղատու ծառոց եւ սյգեստանեաց մշակութիւնը որ հոն շատ ոռոգանութեան հարկաւորութիւն ունին՝ կ'արգելէր, եթէ որ մարդկային ձեռքը որ բնութեան ամէն կողմը առատապէս չիսպարգեւած ջուրը, փութաջանութեամբ բերելու եւ տարածելու կը նայի, իրեն ի նպաստ չզար եւ երկրին ձեռնտու

(1) Աս կտորները այնչափ ճիշտ չեն, կամ Հայաստանի առանձին մէկ գաւառի միայն յատուկ եղած բարեխառնութիւնը բոլոր Հայաստանի տրուեր է : Մ. Թ :

չըլլար : Ասոր համար իսկ ձմեռուան մէջ նոյն իսկ 7000 ոտքէ վար եղող լեռներու վրայ առատապէս ձիւն տեղալը երկրին համար սարգեւ մըն է, և բնակելի ըլլալուն և բարեբերութեանը համար անհրաժեշտ հարկ. ասկէց է որ անպտղաբերութիւն, երաշտութիւն և աղքատութիւն ան ամէն կողմերը կը տեսնուին, ուր որ ձիւնամած լեռներ, գետեր կամ առուներ կը սրակսին, և կամուրորդեալ նոյն հարթայատակ ըլլալուն պատճառաւ, գետին ջուրը արուեստական ջրադարձներով դարձնելը և աւելորդ ջուրը հանելով հեռու եղող չոր գետինը թրջելը անկարելի կամ շատ դժուարին է : Այս օգին այլակերպ և հակառակ բարեխառնութենէն է դարձեալ որ, մշակութեան ան բանջարեղէնները որ ձմեռուան սաստիկ ցրտութեան կը դիմանան, և ամառը արագ յաջողելու և պտուղները հասուն նալու համար շատ տաքութեան մը հարկաւորութիւն ունին, հոս առատապէս կը յաջողին : Բամբակը, բրինձը, բնձուտը շատ աղէկ կը յաջողին, իսկ թուղը ոռոգանութեամբ նաբաստաւորուած տեղ մը կուզէ . ձիթենին ձմեռուան սառնամանեաց չկրնար հանդուրժել. նարինջը առաջ Պարսկային ծոցին և Միջագետքի ստորին կողմերը կ'ելլէ : Ասոր հակառակ այգին նոյն իսկ Վան ծովակին գրեթէ 5500 ոտք բարձր ալիանցը վրայ, և ասկէց սլ աւելի բարձրագոյն Հարբարեան Չապ դաշտավայրներուն վրայ կը յաջողի, ուր ինչպէս յայտնի է աս երկրէն աւելի ամոքախառն և հաւասարաչափ Բրիտանիոյ օգին մէջ ողկոյզը երբէք չհասուննար » (Մորից Վակնէր) :

Հայաստանի լեռներուն վրայ բնակող, կամ առնոնցմէ յառաջ եկող Հայոց ազգը իր սկզբնաւորութիւնը ան լեռներուն հետ կապած է ըստ Մովսիս սահլան աւանդութեան, որն որ ջրհեղեղէն ետքը մարդկութեան միւսանգամ ծննդեան խանձարուր Սրարատ լեռան վրայ կը դնէ : Աս սերունդին նկարագիր նախատիպ կերպարանքը առանց փոփոխութեան յորդոց յորդիս անցաւ պահուեցաւ, ինչպէս որ հրէական նկարագիր դժադրութիւնն ալ Իսրայէլի որդւոցը մէջ անարատ մնաց, թէպէտեւ Հայերը անոնց պէս առանձնական անջատ կրօնքով մը ուրիշ ազգերէ զատուած չեն, այլ քրիստոնէական մեծ դերդաստանին կը վերաբերին : Ի վերայ սցար ամենայնի Հայք՝ ազգին մեծագոյն մասովը առանձին եկեղեցի մը կը կառուցանեն, և աս եկեղեցին Յունաց և Լատինացւոց աստուածարաններէն մարատուելով, ազգային նկարագիր մը ստացաւ, որն որ զիրենք ուրիշ քրիստոնէաց հաւարակութեան մը հետ կրօնական ամէն միաւորութենէ հեռու կը բռնէ : Հռովմէական կամ Աթոլիկ Հայերը, որոնք արեւմտեան եկեղեցեաց հետ ստէպ յարարերութիւն ունենալովնին աւելի դիւրամատոց են, խառն կամ օտար ազգաց հետ ամուսնութիւնը յաճախ ի կիր կ'արկանեն : Իսկ լուսաւորչեան Հայոց համար գլխաւոր զանազանութիւն մը ընելու է . Օսմանեան պետութեան մէջ եղող Հայոց մէջ խառն ամուսնութեան ամենեւին օրինակ մը չկայ, իսկ Աւստրիոյ և Ռուսաստանի Հայոց մէջ երբեմն երբեմն խառն ամուսնութիւնը երեւան կուգայ :

Հայոց ժողովրդեան գրեթէ ընդ ամէն աշխարհ

102-978
846-2011
35661
38



սիրուած մնացորդները, առաւելագոյնս հիմայ գու-
մարուած կրդտնուին Օսմանեան պետութեան մէջ,
Պարսկաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Աւստ-
րիա, և Պանուրի ծովը թափելու կողմերը
եղած երկիրներումէջ: Տաճկաստան և Ռուսաստան
կ'ապրի Հայոցամենէն շատ բազմութիւնը: Այսպէս
ընդ հանուրս սիրուած ըլլանուն համար, դժուարին
է իրենց թիւը ճիշտ որոշել, այսու ամենայնիւ հա-
շիւներուն նայելով, որոնք իրաւայի և օրինաւոր
կ'երեւան թէ ըլլան, զիրենք չորս միլիոնէն վար
պէտք չէ համարել: Աս բազմութիւնը կը բաժնուի
գրեթէ այսպէս,

(1) Օսմանեան պետութեան մէջ (արեւմտեան
և հարաւային Հայաստան, Իփրր Ասիա,
Ասորիք և Եգիպտոս, Ռումելի և Պա-
նուբեան իշխանութիւններ) . . . 2,500,000

(2) Ռուսաստան (միջին և հիւսիսա-
յին Հայաստան, Վրաստան,
Երիւան և Տաղքստան, Եւ-
րոպայի Ռուսաստան և Պողո-
նիա) 1,200,000

(3) Աւստրիա (Կալիցիա, Պուդովի-
նա, Պրանսիլուանիա, Հուն-
գարիա) 25,000

(4) Պարսկաստան 150,000

Արեւելեան Հնդկաստան և
Հնդկային Արբիպեղազոս . . . 25,000

3,900,000

Եթէ աշխարհիս ուրիշ կողմերն ի սիրուոս եղած

մէկալ Հայերն ալ 100,000 համարենք, կելլենք վերը նշանակուած չորս միլիոն թուին : Առտանդնուպօլիս բնակող Հայոց թիւը հեղինակները շատ տարբեր և այլակերպ կը դնեն : Պ. Հիսարեան Պօլսեցի հայազգի գրագէտը, որ Բանասէր (շիդէրադօր) հայերէն լրագրին հեղինակն է, և Ռօպըր Քէօրսըն (1) Անգղիացի մատենագիրը անշուշտ առանց օրինաւոր սխառմաւ մը ունենալու Հայոց թիւը 100,000 ի կ'ինջեցնեն : Պորէ՛ կղերիկօսը (2) 222,000 հայազգի կը հաշուէ, (205,000 Առաւորչեան և 17,000 Հոովմէական) . վերջապէս Արդէնց Ռիկլէր որ սրաշոծնական հաշուին ճիշտ տեղեակ ըլլալու աւելի կարողութիւն ունէր 250,000 Հայ կը դնէ (3) : Եզրապտօս Հայերը գրեթէ առհասարակ Աղեքսանդրիոյ և Գահիրէի մէջ կը բնակին և Յէն մինչև 4,000 կը համարուին : Պարսկաս-

(1) Հայաստան. տարի մը Կարնոյ մէջ եւ Ռուսիոյ, Տաճկաստանի եւ Պարսկաստանի սահմանները. (Առնտոն 1854) : Ծ. Հեղինակին :

(2) Օրացոյց Օսմանեան Պետութեան 1849 տարւոյն համար : Ծ. Հ :

(3) Հետաբերքական է Առտանդնուպօլսոյ այլ եւ այլ ազգաց բնակիչներուն համեմատական թիւը գիտնալ, զորն որ Ռիկլէր Խալադայ Սարայի բժշկական դպրոցին մէջ գործունեայ բժշկութեան (քիմիք) առաջուան ուսուցիչը կուտայ : Իր «Տաճկաստան եւ իրեն բնակիչքը» անուանեալ գրքին մէջ (տպեալ ի Վիէննա, 1852) Առտանդնուպօլսոյ բնակիչքը կը դնէ այսպէս,

տանի Հայոց վրայ տեղեկութիւնները այժմեան
Շահին առաջին թարգման Պ. Յովհաննէս Պատթէն
ստացուեցաւ, որն 1851 ին Վիեննա էր որպէս զի
Աւստրիոյ տէրութենէն Պարսկաստան զօրայ
համար կրթիչներ խնդրէ տանի :

Աս այլևս այլ երկրիներու մէջ աննման օգերը,
ապրելու տարրեր կերպը, և սէսպէս վիճակը
կրնայ որ Հայու նախատիպ կերպարանայ նկարա-
զիրը փոխած ըլլայ : Արի կէր կը կարծէ թէ իրենց
բուն սեպհական նկարագիր կերպարանքը անիո-
փոխ և աւելի անարատ պահուած ըլլայ Տաճկաս-
տանի մայրաքաղաքին մէջ եղող հայազգի գոր-
ծաւորաց և բեռնակիրներուն վրայ : Ասոնք հասա-
րակօրէն 5 ոտք կամ 5 ոտք և 2 մատ բարձր են,
ամուր և տոկուն մարմնոց կազմուածք մը ունին,
բոլորակ և դուն ուրեք յուրանաձև թիկունք, երե-
սայ անկիւնագծեր՝ որ 80 էն մինչև 85 աստիճան

Տաճիկ	400,000
Հայ	250,000
Յոյն	130,000
Հրէայ	20,000
Հելլեն (Յունաստանի թաղաւորութեան հպա- տակ)	6,000
Եւրոպացի այլ և այլ ազգեր	8,000
	814,000

Փանօթութիւն Հեղինակին :

կը բացուին : Մաղերնին սև է, կերպարնայ գծա-
գրութիւնը աչքի զարնօղ, քթերնին շատ դուրս
ցցուած և արծուէական, երեսայ գոյնը կենդանի,
չրթունքները լեցուն, ակուաները սպիտակ և մէկ-
զմէկէ հեռու : Հաստապլինդ սրարանոց մը կը բարձ-
րանայ իրենց մարմնոց բունին և թիկանցը վրայ,
որ շատ ուժեղ են, և յօգաւոր անդամները բուն
մարմնոցն հետ ամուր մկունքներով կապուած են :
Իսկ ան դասի Հայերը որ նատողական կեանք մը
ունին և բրինձով որ սովորական կերակուրնին է՝ կը
սնանին, ծերութեան ատեննին տձև և ծանրամար-
մին կըլլան : Հայու կանայք և աղջիկները քանի որ
դեռ մատաղօրեայ են և սովորականէն դուրս գիրու-
թիւն մը չեն առեր, որն որ բոլոր արեւելեան կանանց
վրայ կ'երևայ, ընդհանրապէս չնաշխարհիկ գեղեց-
կութեան և թարմ գոյներնուն համար անուանի
են : Իրենք հարուստ զարդարանքը, կենդանի
գուներով մետաքսեայ կերպաները, ոսկեթել և
արծաթահիւս նկարակերտները, շողշողուն գոհար-
ները, նորանշան ձեւերով հնդիկ ազնիւ ցիտին չափէ
դուրս շատ կը սիրեն և կը կղկաթեն : Իրենց գլ-
խաղիք զարդարանքը զորն որ կապերով և ծաղիկ-
ներով կը յօրինեն՝ իրենց նուրբ և ընտիր ճաշակին
նշան մըն է : Իրենք մութ սևաթոյր մազ ունին,
աղուոր կերպարանաւորուած և շատ կենդանի
աչքեր, որոնց վրայ ձևաւոր արտեանտունները լա-
րուած են, սակայն կը պակսի իրենց զուտ հաւկթաձև
երկնիկէ կրես մը որն որ Վրացի կանայքը նշանաւոր
կ'ընէ : Սրելեղեան կերպով նատելու սովորութիւնը
իրենց գեղեւուն քալուածք մը կուտայ : Իրենց կեան-

քը որ տնական գործոց և տղաքնին կրթելու նուիրուած է, կանանոցին մէջ կը սահի կ'անցնի, ուր որ զիրենք չէ թէ նախանձը, այլ Տաճկի բարուց նմանելու պարտաբոլութիւն կ'աքսորէ կը գոցէ : Հոովմէական Հայք հասարակօրէն առաւելապէս կուտան իրենց կանանց ան ազատութիւնը, զորն որ կանանց գեղեցիկ սեռը մեր մէջը կը վայելէ : Հայերը ընտանեկան առաքինութեանց շատ մտադիր են, իրենց ընտանիքը կը սիրեն, և իրենց տնական կեանքը հայրապետական և նախնական կերպարանք մը ունի : Արէնց Ռիկլէր կ'ըսէ թէ, բոլոր արեւելեան ազգերուն մէջ աւելի աշխատասէրը, մտացին և կրթեալը Հայոց ազգն է : Աճառականութեան, դրամասեղանի, և առևտրոյ մէջ իրենց ունեցած մասնաւոր աջողակութիւնը յայտնի է : Սակայն և այնպէս վաճառականութեան մէջ իրենք իրենց առաջուան կարևորութիւնը հիմաց չունին : Իրենք շատ վար մնացին Յոյներէն, որոնք Տաճկաստանի բոլոր վաճառականութիւնը ձեռք առին, և Եւրոպայի մայրաքաղաքներու մէջ վաճառականութեան տուներ հաստատեցին : Իսկ Տաճկաստանի ներսի սեղաւորութիւնը տակաւին մի միայն իրենց սեպհանուած է, առանց այսու ամենայնիւ որ ունենան ան մեծ հարատուութիւնը որն որ հասարակօրէն իրենց կը տրուի : Եսպարքոսներուն յառաջուց կանխիկ ստակ սալու պարտաւորուած ըլլալուն համար, իրենք ալ սա փոխփոխական և երերուն պաշտօնէից բախտէն կախուած են, և անոնց իյնալովը իրենք ալ կը կրեն : Հիմաց Արստանդնուպօլսոյ մէջ մեծ սեղա-

նաւորներու միայն տասը կամ տասուերկու տուն
կայ : Մինչև ետքի ժամանակներս Տաճկի կառա-
վարութեան գրիողութիւնները շնորհեցին որ հարս-
տութիւնը գէթ մինչև երկու ծնունդ մէկ տան
մը մէջ ժառանգութեամբ մնայ : Բազմազանձ և
մեծ հարստութեան տէր Հայեր եթէ ուզուի,
այսօրուան օրս ալ միայն Աւստրիոյ, Արևելեան
Հնդկաստանի և Ռուսաստանի մէջ պէտք է փնտուել:
Հայերը եթէ ստակ վաստկելու ցանկացող ալ են,
այսու ամենայնիւ ընդհանրապէս արդարութեամբ
գործքերնին կը ընեն, ասոր համար Օսմանեան պետու-
թիւնը տէրութեան եկամուտը ժողովելու մէջ աւելի
նախամեծար կ'ընէ իրրև գործակալ և միջնորդ գի-
րենք ընտրել : Ամէն օր և իցէ գործքի մէջ չափէ դուրս
խնայօղ են, սակայն կրօնական կամ ազգային հիմնար-
կութիւններու մէջ մեծ առատաձեռնութեամբ շնոր-
հարեր կը լլան : Աս ետքի տարիներն ալ այսպիսի
տուրքերով շատ հիւանդանոցներ, դպրոցներ, վար-
ժարաններ և քաղաքական ընկերութիւններ շի-
նուեցան : Հայերը Արևելքի Հոլլանդացիներն են,
վաս ջերմաջերմ բայց անշիտթ և խաղաղիկ եռան-
դով մը ամենէն փոքր վաստակներու ետեէն կ'իյնան.
չեն սիրեր աղաղակը և արտաքին փառաւորութենէ
կամ ցոյցբերի կը զգուշանան : Յաջողութեան մէջ
իրենց ստորակարգեալներուն վրայ վհատ և պահան-
ջօղ, իսկ գլուխնին եկած դժբախտութեան ատենն
ալ կը համբերեն խոնարհութեամբ և հեղութեամբ,
որոնք քրիստոնէական աղբիւրէ մը յառաջ կուգան,
սակայն կարելի է նաև որ Տաճկական նախանձայու-
ղութեան վրանին ըրած աղքեցութենէն ալ աս

առարկնու թիւնները վրանինտ պաւորուած են : Իրենց ազգին միւտանգամ կանգնուել և բարգաւածիլը իրենց ամենաբաղցր ակնկալութիւնն է . իրենց անուրախարար տեսիլքը ըստ խմբ յարդիւնս եկած մը կը համարին քանի որ Նիկողայոս կայսրը 1828 մարտի 21ին (ապրիլ 2) հրովարտակովը Երևան և Նախջուան կուսակալութեանց անուան քով Հայաստան անուան ալ աւելցուց : Իրենց բնաւորութեան մէջ աւելի ծանր և տոկուն, քան թէ աչքի զարնօղ կամպերճ յատկութիւններ կ'երևան : Իրենք երևակայութեան ոչ շատ բարձրագոյն կարողութիւն մը, և ոչ ալ պատերազմական առանձնակի ոգի մը ունին : Սակայն ասոնք ըսելով չենք ուղեր հաստատել թէ իրենց վրայ քաջարտութիւնը կը պակսի . շատերը իրենց մէջ ճակատներու մէջ հոյակապ և նշանաւոր եղան : Ռուսաստան 1828 թուականին պատերազմայր մէջ Հայադունդ զորաց գումարտակ մը ունէր ի վարձու : Պատերազմական հանձարով այժմեան անուանի Հայերն են Մատթաթոֆ զորավետը, որն որ Պարսից դէմ եղած պարերազմներու մէջ Ռուս զորաց բանակի մը կը հրամայէր . Արղութեանց-Տոկորուքի իշխանը, որ հիմայ Տաղստան գաւառին հրամանատարն է . նոյնպէս Բէհրուտոֆ (1), Օրսէլեան, Բազրատին-Մուխրանաքի զորավետները . որոնք Ասիայի 1853 թուականին պատերազմներու մէջ անուանի գործքեր

(1) Օրսէլեան իշխանը կ'ըսուի թէ Հայաստանի տահմանները պատերազմի մէջ զարնուեր մեռեր է : Ծ. Թ. :

գործեցին : Հայոց ատելի մէկ բնաւորութիւնն է՝ նախանձ և անմխարանութիւն, որ զիրենք իրարու մէջ կը բաժնէ և որն որ հիմայ մասնաւորապէս կրօնական նիւթոց մէջ ճարակ դտած է :

Հայաստանեայց Եկեղեցին որ Ազգին մեծ մասը կը բովանդակէ, մեր մէջը հասարակօրէն Հայկական արևելեան Եկեղեցի կը կոչուի. իսկ իրենց մէջը (Ս. Գրիգոր Լուսաւորչէն) Լուսաւորչեան կամ Գրիգորեան կ'անուանուի: Ասեկեղեցին քաղկեդոնի ժողովքին որոշումները մերժելուն համար յաճախ Միաբնական կը համարուի, սակայն ինքը ի Քրիստոս երկու բնութիւնները կ'ընդունի : Հայոց եկեղեցւոյն՝ Յունական եկեղեցւոյ հետ միաւորիլը, Բիւզանդիոցի կայսերութեան բռնաւորութեամբը և բռնած քաղաքականութեանը սրտածաւառ անկարելի եղաւ : Հռովմէական Հայերը սկսած են Հայոց վորր թագաւորութեան այս ինքն Ուրենեանց ժամանակէն, որն որ Խաչակրաց ժամանակը բողոքովին Լատինացւոց կողմը հակամիտեալ էր : Հայերը՝ Հռովմէն բաժնօղը չէ այնչափ հաւատոց վարդապետութեան տարբերութիւնը, (որն որ Հոգւոյն սրբոց Աստուծոց Հօրէ միայն բղխելուն և բաւարանի վրայ տարբեր կարծիքներու վրայ միայն կը կայանայ) որչափ Պապական իշխանութիւնն է, որուն ներքև խնամարհիլը, իրենք առանց իրենց ազգայնութիւնը կորսնցնելու կամ « Ֆրէնկ ըլլալու » կը համարին թէ անհնարին է : Ամենասուրբ Կուսին Չերմեռանդութիւնը իրենց մէջն ալ բարձր տեղի մը բռնած է. իրենք կը սիրեն կրօնական արարողութեանց մէջ մեծահանդէս

իստուարութիւնը և Սուրբ տեղեաց ուխտի երթալը : Շատերը իրենց անուան վրոյց մահտեսի պատուանունը կ'աւելցընեն, զորն որ Երուսաղէմ ուխտագնաց ըլլալուն համար գործածելու իրաւունք կ'ունենան : Տարուան մէջ չորս մեծ պահք ունին, զորոնք նաև ճանապարհորդութեան և հիւանդութեան մէջ ալ մեծաւ ճշտութեամբ կը պահեն : Աս ետրի ժամանակներս բողոքական քարոզիչները իրենց բովերը կը դեղերին, և Զմիւռնիոյ, Պօլսոյ Կարնոյ և Իսպահանայ Զուղա արուարձանին մէջ շուրջ երեք հազար (1) լուսաւորչեան Հայ բողոքականութիւնը ընդունեցան :

Լուսաւորչեան Հայոց մեծ մասը Էջմիածին եղող Կաթողիկոսը իրենց Եկեղեցւոյ գլուխ կը ճանչնայ : Ան ծովու Աղթամար կղզւոյն մէջ եղած կաթողիկոսական աթոռարդի մօտաւոր ժամանակներս վերջացաւ : Իսկ Սոյ (առաջ Հոռոմ-Կլայ էր) Կաթողիկոսութիւնը կը տւէ տակաւին Սուրբ Գէորգայ վանքին մէջ, սակայն իր սակաւաթիւ վանականներովը և վայրագ Քիւրտերէն բողոքովին կախում ունենալովը տխուր վիճակի մէջ է և քիչ ազգեցութիւն ունի : Կաթողիկոսին ներքև երկու թէմական պատրիարքութիւններ կան, որ են Կոստանդնուպօլսոյ պատրիարքութիւնը (1461 թուա-

(1) Ըստ ինքեան, եւ ազգին ընդհանրութեանը նայելով ոչ ինչ բան մըն է առ թիւը, սակայն իրապէս բողոքականութիւնը գրկողներուն թիւին համեմատելով չափազանց է : Զուղայի մէջ ալ բողոքական ամենեւին չկայ :

կանին հաստատուած), և Երուսաղեմայ պատրիարքութիւնը (հաստատուած 1311ին): Նյուիրապետութեան (Ռիչուաշի) դասակարգութեան մէջ ասոնցմէ ետքը կ'ուզան Արքեպիսկոպոսներ, Եպիսկոպոսներ, և Քահանայք որոնք տէր տէր կ'անուանուին : Քահանայք ձեռնադրուելէն առաջ պէտք է որ ամուսնանան : Ասկէց յառաջ կուզայ որ, Հայաստանի անգաւառները ուր ժողովուրդը աղքատ է, ասքահանաները, որ հասարակօրէն բազմաթիւ ընտանիք մը դարմանելու պէտք ունին և ըստ բաւականին եկամուտ չունենալով, տեսակ մը արուեստի կամ երկրագործութեան և սրահարարուծութեան կը պարապին: Ամենեին պարապոյ ժամ և ժամանակ չունենալուն համար, տխուր տղխութեան մէջ կեանքերնին կ'անցնեն :..... (1) Աղքատութենէ զատ ուրիշ մէկ պատճառ մըն ալ ստորին կղերը իրեն

(1) Հոս Հեղինակը Մորից Վակնէրին Հայաստան ըրած ճանապարհորդութեան ժամանակը, քահանայից վրայ գրած տեղեկութիւններէն 26 տողի չափ վերայութիւն կը բերէ : Մենք որ չափ որ զրուածին մէկ մասը զուտ զրպարտութիւն, մէկ մասը չափազանցութիւն կը համարինք ալ, այսու ամենայնիւ մէկ մասն ալ, թէպէտ եւ սողգային ոգւոյն տխրելովը, իբրեւ դժբախդ ճշմարտութիւն կը ճանչնանք : Մակայն բարձրաստիճան եկեղեցականները եւ ազգերնու ընդհանրութիւնը ըստ իմիք արդէն ասոր դարմանը տարած ըլլալով եւ տանելու ալ մտադիր ըլլալուն համար, Վակնէրին ըսածները քահանայից արդեան վճակին նայելով

ստորնութեան մէջ կը պահէ : Ինքը չի կրնար երբէք
քարձրագոյն աստիճաններու թեկն ածել, և անույշա-
ռաջ նկրտելու եւ անգն կամ մղումը իրեն կը պակսի :
Քարձրագոյն եկեղեցականները չեն կրնար կարգ-
ուած ըլլալ, և անոր համար Ռուսաստանի և
ընդհանրապէս բոլոր Արևելքի պէս վանականներէն
կ'ընտրուին : Վանքերէ կ'ելլեն նաև Վարդապետ-
ներն կամ Աստուածաբանները որոնց յանձնուած
է դաստիարակութիւն և քարոզութիւնը : Քահանա-
յից պաշտօնն է մի միայն Պատարագ մատուցանել
և Եկեղեցւոյ Սուրբ Խորհուրդները մատակարարել :

Կաթողիկոսը իրեն առնթեր Խորհուրդ կամ
եկեղեցական Սինչոզոս մը օգնական ունի, որն որ
թէ մչունեցող Արքեպիսկոպոսներէ և Եպիսկոպոս-
ներէ գումարուած է, և մէկ Ատենադպիր ունի,
որուն պաշտօնն է իրողութեանց հաշիւը և տեղե-
կութիւնները տալ, և միանգամայն Կաթողի-
կոսական դիւանատան գահերէջն է : Եթէ իրողու-
թիւնները մեծ և կարևոր բաներ ըլլան, ան
ատենը Սէն-Բէդրոպուրկ կը ծանուցուին և Կով-
կասեան գաւառներուն Կառավարին միջնորդու-
թեամբը Կայսեր որոշման առջևը կը դրուին : Թէ
որ Կաթողիկոսը մեռնի, 15 վիճակական Առաջ-
նորդներ որ Պարսկաստան, Ռուսաստան և
Օսմանեան պետութեան մէջ թէմերնին ունին,
Ազգին երևելիներուն և Ընկերակցութեանց պատ-
դամաւորներուն հետ մէկ տեղ կը գումարուին :

Իզրեւ. անասոյց կը համարինք եւ չի թարգմանե-
ցինք : Ծ. Թ :

Քուէարկութեամբ երկու առաջարկուած անձինք
կ'ընտրուին և Ապսեր կը ներկայացուին , որն որ
հասարակօրէն ամէն անգամ շատ քուէ ունեցողը
կը հաստատէ : Որչափ որ Էջմիածին Պարտիցիշ-
խանութեան տակն էր , հարկ էր որ Աթողիկոսու-
թեան հաստատութիւնը դրամական մեծ ապարդե-
րնձաներով գնուէր : Եթէ կաթողիկոսութեան ուրիշ
հետամուտ եղօղ անձ մը ելլէր , ընծաները յանչափա
կ'ելլէին , և շատ անգամ ալ պատահած է որ ,
Աթողիկոսը յանձնառու եղած սրարտաւորու-
թիւնները կատարել կարօղ չըլլալով խոյս տալու
ստիպուած է : Օսմանեան տէրութեան մէջ Հայոց
եկեղեցական հառաւիարութիւնը Էջմիածնայ նման,
նոյն սկզբանց վրայ հաստատուած է : Առտանդնու-
պօլսոյ Պատրիարքը իր քովը Ատեան մը ունի , որն
որ եկեղեցական գործոց վարչութեան մէջ իրեն
գործակից է , և տանեւ չորս անդամներէ կը բաղ-
կանայ , որոնց տանեւերկուրը եկեղեցական , իսկ
երկուրը աշխարհական են : Աս եկեղեցական
Ատեանը կամ Սիւնհոդոսը ամէն երկու տարին մէյ
մը նորէն կ'ընտրուի եւ կը նորոգուի . Ազգին
երեւելիները եւ արուեստական Ընկերակցութիւն-
ները ընտրութեան մէջ մտանակից են : Նա և
Պատրիարքը իսկ ժողովրդեան ընտրութեամբը կը
դրուի , սակայն իր պաշտօնը կարօղ չէ կատարել
մինչեւ որ Սուլթանէն տուչութիւնը (էնվէտիդիար)
առած չըլլայ : Կոստանդնուպօլսոյ Պատրիարք է
Հիւսնց Յակոբ Սրբազան Արքեպիսկոպոսը , իսկ
Փոխանորդ՝ Թաղէոս Սրբազան Եպիսկոպոսը :
Պատրիարքը քաղաքական իշխանութիւն ալ ունի .

զլխոց հարկը տէրութեան հաշուին համար կը ժողովէ, դպրատանց եւ մարդասիրական հիմնարկութեանց վրայ կը հսկէ, կը կառավարէ, ողորմութեան տուրքերը ազրատաց կը բաժնէ, եւ ընդհանրապէս ներքին վարչութեան գործքերը իրենն են : Այսպիսի իրողութեանց մէջ իրեն ի նպաստ ունի քաղաքական խորհուրդ մը գերազոյն ժողով (1) ըստած որ 19 աշխարհակրան անձինքներէ կը կազմուի, եւ ամէն երկու տարին մէյմը ընտրութեամբ կը նորոգուի :

Հոովմէական Հայոց թիւը 250,000 կը հաշուի, ըսել է թէ Ազգին տասնվեցերորդ մասին մէկ մասը կը կայուցանեն (2) : Իրենք գլխաւորաբար Փարբ Ասիոյ, Լեհաստանի, Աւստրիոյ եւ Ղանուրեան իշխանութեանց (3) մէջ տարածուած են : Նաև Կոստանդնուպօլսոյ, Ասորոց եւ Ռուսաստանի Կովկասեան գաւառներու մէջ բազմաւոր են թուով : Ախրլցխա քաղաքին մէջ գրեթէ 4,000

(1) Հեղինակը կը դնէ « Հաղաքակար ժողով » պիտի ըլլայ Քաղաքական ժողով. իսկ մենք Ազգին ընդունածին համաձայն գրինք գերազոյն ժողով : Ծ. Թ. :

(2) Աս թիւը եւ համեմատութիւնը ճիշտ չէ : Ծ. Թ. :

(3) Ղանուրեան իշխանութիւնները մեզի ծանօթ են. մէջերնին ասղխ անդին Հոովմէական քանի մը առանձնական Հայերկան. բայց հասարակութիւն կամ եկեղեցի եւ ոչ ուրեք չեն կայուցաներ : Ծ. Թ. :

կը գտնուին : Ալակեազ լեռան հիւսիսակողմը տարածուած դաշտավայրին վրայ Քաթողիկ ամբողջ գեղեր կան : Հռովմէական Հայք երկու պատրիարքութիւն ունին. մէկը Պէղումմար Լիրանանու մէջ (յառաջագոյն ի Սիւ), երկրորդը Կոստանդնուպօլսոյ մէջ : Պէղումմարի Պատրիարքը անուանեալ (1) երկու Սքքեպիսկոպոսներ ունի, եւ իր իշխանութիւնը կը ձգի Հալէպի, Մէրսիւնի, Ամասիոյ և Եւզոնիոյ եպիսկոպոսներուն վրայ : Իրեն իրաւարանութեան մէջ կը պարունակուին Ասորիք, Կիլիկիա եւ Փոքր Ասիոյ մէկ մասը : Կոստանդնուպօլսոյ պատրիարքութիւնը նոր շէնք մըն է : Մինչև 1828 երորդ տարին միայն Գրիգորեան մասը պատրիարք ունէր , որուն նաև Հռովմէականները ստորակարգեալ էին : Կիլիսիո Գաղղլաջուցոյ դեսպանին առանձին պատրիարք մը դնելով, Հռովմէականները Լուսաւորչեան Հայոցմէ անկիսընելու համար ըրած ջանքը, Գրան ժխտելովը երկացն ժամանակ ի դերու ելաւ, մինչև որ էն ետըր վերոյիշեալ տարին ճամբայ մը գտնուեցաւ Պատրիարքին քաղաքական եւ եկեղեցական իշխանութիւնը բաժնելու (2) : Եկեղեցական իշխանութիւնը առաւ Պապէն դրուած Նախագահ մը. իսկ աշխարհական գործքերը հասարակ վանա-

(1) Ին բարդիպիւս :

(2) Հոս Հեղինակին գաղափարները շփոթ են. որովհետեւ աս կտորին եւ վարի յաջորդ պարբերութեան մէջ առնչութիւն կամ սերտիւ կապ մը չկայ : Մ. Թ. :

կան քահանայ մը, որն որ» Քաղաքական Պատրիարքի » պատուանունը առաւ : Նախադա՛հ է այժմ Հասուն Պերապայծառը՝ Բրորափանտայի աշակերտ, խակ քաղաքական Պատրիարք Նիկողայոս Ասիոն վարդապետը, որն որ Լիբանանու Արօնաւոր մըն է : Հռովմէական Հայոց եկեղեցւոյն նուիրօպետութեանը մէջ կը հաշուի հին Հայաստանեայց հինգ մետրապոլտական աթոռներն, որոնք հիմայ միացն անուանեալ արքեպիսկոպոսութիւններ են, եւ են՝ Շիրակ, Տարօն, Վան, Սիւնիք եւ Աեսարիա : Ետքի աթոռներուն պատուանունը կը կրեն Վիէննայի եւ Վենեաիկոյ Մխիթարեանց երկու միաբանութիւններուն Արքահայրները :

Մխիթարեանք որոնցմով քիչ մը ետքը Հայոց գրականութեան վրայ խօսելու պիտի անցնինք, ընդարձակագոյնս վրանին գրելու արժանաւոր են : Նախընթաց դարուն սիլիզբները, Հայք գլուխնին եկած ամէն տեսակ դժբախտութիւններէն ետքը տակաւին խանգարութեան մէջ իցնալու վտանգի մէջ էին : Իրենց մայրենի լեզուն, ընակած երկիրներնուն գաւառական լեզուներովը եւ քարուցը հետ միանալով օր քան զօր աւելի աներեւոյթ ըլլալու վրայ էր : Ազատողը եղաւ Մխիթար որ փոքր Ասիոյ Սերաստիա քաղաքը ծնած յառաջագոյն Լուսաւորչեան էր : Ինքը վառ եռանդով եւ երկաթի անյողղողդ գործունէութիւն ունեցող մարդ էր : Քաթոլիկութեան հաւատքը առնելուն համար թշնամութիւն կրելով, առիպուեցաւ իր հաստատած հիմնարկութեամբը Աստուանդնու-

պօղիա թող տալ, եւ Մուսայէն ալ որ նոյն ատեն տակաւին Վենետիկեցոց ձեռքն էր՝ Տաճկաց յարձակմամբը վնասուեցաւ : Վենետիկի Հայաբակապետութիւնը ծովալճներու մէջ (ըսկաւնա)՝ Սուրբ Ղազար կղզւոյն վրայ իրեն ապաստան մը շնորհեց, ուր որ սա ուսումնական գաղթակա կութիւնը 1749 ին Մխիթարաց մահուան ատենը արգէնի ծաղիկի էր : Իւր յաջորդը Մեղքոն (Մէլքիտ) Պրեստիմէջ ուսումնարան մը հաստատուեց (1) : Մայր վանքը Վենետիկոց ծովալճներու մէջ պատուան օրս ալ կայ, իսկ Պրեստ հաստատուածը 1807 թուականին Մարմին մարաջախտէն քրքուեցաւ եւ կողոպտեցաւ : Մխարանք սա պատճառաւ Վիէննոս փոխադրեցան, ուր ստատապէս նպաստաւորութիւն գտան : Մխիթարաց դիտաւորութիւնը որ մանկտին կրթելով եւ գրականութիւնը մշակելով Ազգայնութեան ոգին պահէն էր, հիմեց իրեն աշակերտներն ալ տակաւին ունին : Մխիթար սա բանին շարժառիթը ինքը անձամբ տուաւ, որովհետեւ հոգևորական շատ գրուածներէ գատ, նաև իր մայրենի լեզուին քերականութիւն եւ բառգիրք մը հրատարակեց : Իրեն երբորդ յաջորդին, այսինքն Պրանսիլանիացի Ազոնց Քիւէր վարդապետին ժամանակ (1800-1824) մխիթարեան մխարանութիւնը

(1) Հաստատուողը ինքը չէ. այլ ըստ Վիէննացի Հարց հարիւները չի ցրցուներուն համար, իսկ ըստ Վենետիկի Հարց՝ յեղատխտական ոգւոյ եւ երկպառակութեան պատճառաւ Մխարաններէն մաս մը ելաւ հատուած գնաց Պրեստ : Մ. Թ. :

առանց իրեն վանական յատկութիւն թող տալ-
 լու ձեմարանի սահմանադրութեան մէջ մտաւ,
 եւ իրեն նախտակ դրաւ լեզուին մարքութիւնը եւ
 գրագիտական ճաշակը պահել : Աս նախտակը
 աւելի կը տարածէ Հայոց ընտիր մատենագիրները
 (գլխախօ) դրոշմելով, եւ գրականութեան յիշատա-
 կարաններն, այս ինքն ձեռագիրները ժողովելով :
 Բազմաթիւ շատ ձեռագիրներ հիմայ ալ նոր գտն-
 ուեցան : Ս. յ. Մ. Ղազարու գրքատան մէջ հազար
 երկու հարիւրէն աւելի ձեռագիր կը գտնուի, եւ
 էջմիածնայ ժողովածոյքէն միայն վար կը մնայ :
 Բառագիրքը զորն որ ձեմարանը 1836 էն մինչև 1837
 ի լոյս ընծայեց, քառածալ երկու մեծ հատորներ
 կը բովանդակէ, եւ ասրացոյց մըն է, թէ Հայոց
 լեզուն ո՞րչափ անսպառ է անուանակարգութեան
 (նունակարգիւք) մէջ : Ս. Ղազարու տարարանը 10
 մամուլ շարունակ գործունէութեան մէջ կը բռնէ .
 իր գրքերը Արատանդմուարօլիս կը խրէ, ուսկից
 Հայ եղած ամէն տեղերը կը տարածուին : Ա ի էն-
 նայի Մխիթարեանց տարարանը, որ Ասյսերական
 տէրութեան մէջ ամենէն երեւելի տպագրական
 գործատանց կարգն է, չղբաղիր մինակ Հայերէն
 բնագիրներով (դէքոյ), այլ ամէն տեսակ գրքերը,
 որ Եւրոսրայի գլխաւոր լեզուաց մէջ կը գրուին՝
 կ'առնու կը տպէ : Երկայն ժամանակ աս Ա ի էննայի
 տարարանը միայն օգտակար գործքերու կը գործած-
 ուէր, եւ գլխաւորաբար Հանրասպատում (անսխրօ-
 րէտի) գրքեր կը տպէր, սակայն կ'երեւայ թէ այժմ
 բարձրագոյն ուսումնականութեանց գրքեր ալ
 տպելու ինքը զինքը յօժարակամ կը ցուցնէ : Ա ի էն-

նա եւ Ալեքսանտրի տպուած գրքերուն ցանկը ուշադրութեան արժանի է, որովհետեւ կը ցույցնէ մեզի, թէ Հայոց ժողովրդեան միտումը ինչ բանի վրայ աւանդադոյնա կը հակի: Յանկին մէջ ամէն կրթեալ սոցալայ լեզուներու քերականութիւնները տպուած կը նշմարենք. եւ իրաւամբ Հայերը լեզու սորուելու թէ՛ ձիրք թէ՛ սէր ունին: Նոյնպէս բազմաթիւ են նաեւ աստուածաբանական գրուածները եւ ջերմեռանդութեան գրքերը: Մաթեմատիկայի գիտութեանց համար միայն սկզբնական կամ սլաւոնացի տղական գրքեր կան: Թէ՛ հին եւ թէ՛ նոր լեզուաց ընտիր մատենագիրներու թարգմանութիւնները մեզի յայտարար նշան մըն են, թէ Հայերը հին գրականութեան համար ունեցած իրենց հին ճաշակը չեն մոռցած: Պատմութեան եւ Հայաստան երկրին որակաւորութեանը վրայ գրուած իրենց նախնեաց եւ ընտիր գրքերը բնականաբար ցանկին մէջ չեն պակսիր:

Ուսումնական գրուածներ հանելու մէջ, Ալեքսանտրիկէն եւ Ալիէնայէն ետքը Կոստանդնուպօլիս կուգայ, ուր որ այսու ամենայնիւ ուրիշ տեսակ գրքեր կը հրատարակուին: Տաճկաստանի մայրաքաղաքը նախնեաց քանի մը ընտիր մատենագիրներէ եւ պատրաստողական գրքերէ զատ, գլխաւորար կը հրատարակէ դաւանութեան վիճաբանական գրուածներ, դարձեալ վէպեր (ոռնան) որոնց կէսը թարգմանութիւն են, եւ կէսը ինքնագիւտ հեղինակութեան գործքեր (օրիժինալ): Պօլսոյ մէջ կը գտնուի նաեւ « Երիտասարդ Հայաստան » մը, որոնք Բարիզը եւ Վաղղիսայիք իրենց օրինակ առած

են : Պարզմանութիւնները բաղմնապատիկ եւ այլ եւ
այլ նիւթերու վրայ են. ինչպէս, « Պօղոս եւ Վիր-
գինէ », « Մոնտէրրիադո », « Թափառական
Հրէայ » այլովքն հանդերձ : Մինչեւ հիմայ երեք
ինքնագիւտ վէպեր երած են, « Խորոտի եւ Մարրու-
հի » որ Շաղօսլրիանի նմանութիւնն է, « Ագապի »
եւ Պօշպօղազ Հիբեսցէսի (1) (կէշիսրէ այնէս
շվէրյէրս) : Աս ետքիները փիճարանական են
Հոովմէական Հայոց դէմ, որոնք ի հաւատոյ եւ յաղ-
դէ հերձուած ե իրր Ներուպացոյ նմանող կազիկներ
կը ներկայացուին : Մոսկուայի մէջ գործունեայէ
Լազարեանցձեմարանը, որն որ կէս ժը ձեմարան եւ
կէս ժը ուսումնարան է, եւ տպարան մըն ալ ունի :
Աս տպարանին նորագոյն գրքերուն մէջ կը տեսնուի
Լուսաւորչեան Հացոց հաւատոյ վարդապետու-
թեանը հմուտ եւ գիտնական մեկնութիւն մը
զորն որ Պ. Մըսուր շարտղրեց, դարձեալ Յով-
հաննէս Կաթողիկոս պատմագրին՝ Հոյաստանի
Արարացոյ տակը եղած ժամանակին պատմու-
թիւնը՝ Լմինէն ի լոյս ընծայուած, դարձեալ
Սախաղնովի ազգային բանաստեղծութեան գիր-
քը, զորն որ Հախալերտօֆ Տիգիսու բժիշկը հրա-
տարակեց : Տօն գետին քովերը Նոր-Նախջուան
(Նէքադէրինօւլաւ կուսակալութեան մէջ) երեքտա
սաներորդ գարու ժամանակ գրուած առողա-
բաշխական գիրք ժը հրատարակուեցաւ . Էջմիած-
նայ մէջ աս վանքին եւ Արարատոյ հինգ գաւառ-

(1) Հեղինակը գրած է Յօշպօղազ րէկայէսի :
Ծ. Թ. :

ներու ստորագրութիւնը, որն որ աւանդած եւ մեկնած արձանագրութեանցը համար մասնաւոր կարեւորութիւն մը ունի (1). Տիգրիսի մէջ Սանահնայ վանականի մը (2) Հայաստանի մէջ ըրած ճանապարհորդութիւնը տպուեցաւ. Մատրաս Վաղենտինոսի տակը եղած Հայոց պատմութիւն մը տասներորդ դարուն, նոյնպէս տասուիրեքերորդ դարու մէջ Մոսկովներուն արշաւանաց պատմութիւնը. Կալիաթայ Պ. Մետրոպ թագիղեանէն՝ Հայաստանի ճանապարհորդութիւնը : Աս ցանկին վրայ սէտք է աւելցնել նաեւ Բրոքսիանտոյի աշակերտներէն Հոովմ հրատարակած, գործքերը, որ հասարակօրէն քերականութիւններէ, բառգիրքներէ, ծիսական եւ աղօթից գրքերէ կը բաղկանայ : Հայոց շրջաբերական գրուածները միայն անձնական բաժանորդութեամբ եւ կամաւոր ընծաներով կը բռնուին : Ի վերայ այսր ամենայնի ան շարդացումն եւ բարգաւաճանքը ստացան, զորն որ տէրութենէ իսկ նպատաւորուած տաճկական մամուլը չկրնար պարծիլ թէ ունի : Չկայ ըստ բաւականի մեծկակ հայարնակ քաղաք մը ուր հայերէն լրագիր մը հաստատելու ձեռքդարնուած չըլլայ : Աս նիւթիս մէջ Հայերը բոլոր արեւելեան ազգաց մէջ աւելի յառաջադէմն են, նա մանաւանդ միայն իրենք են որ, իրենց լրագիրներուն մէջ՝ քաղաքական եւ թէ՛ ուսումնական նպատակ մը առջևնին դրած

(1) Հեղինակն է Յովհաննէս եպիսկոպոս Եահախաթունեան : Ծ. Թ. :

(2) Սարգիս վարդապետ Չալսլեան : Ծ. Թ. :

են : Վենետիկոյ Միսիթարեանք 1812 թուականին
Կոստանդնուպօլսոյ մէջ հաստատած (1) Բիւզանդեան
Ղիտակ լրագրովը (Պէօպաիտէր ֆօն Պիդանս)
Հայոց մէջ լրագիր գրելու սկզբնաւորութիւն
եւ ճաշակը տուին : Աս լրագիրը առջի տարիները
միայն քաղաքական լրերով կը զբաղէր. բայց ուսումնական
եւ դրագիտական հատուածներ ալ կ'ընդունէր :
Չորս տարի տեւեց, եւ տասնեւմեց տարի ետքը
իրեն յաջորդեց Օսմանեան տէրութեան լրագրին
հայերէն թարգմանութիւնը : Հիմայ Տաճկի լրագիրը
կը ներկայացուի Հայ ազգին մէջ Մէճմայի հաւատիս
ըսուած լրագրով : Բայց Կոստանդնուպօլսոյ բուն
և առաջին, և թէ հնար է ըսել պաշտօնական
լրագիրը եղաւ « Հայաստան », որ 1846 ին սկսաւ,
և իրեն նպատակ առած էր Տաճկի տէրութեան
գործերէն զատ հրատարակել նաև ուսումնական,
քաղաքական և առ և տրոյ ան լուրերը՝ որ Հայոց
համար կարեւոր էին : Հայաստան լրագիրը ղիմացաւ
մինչև 1849, անկէց ետքը ստակի պակասութեան
և վէճերու պատճառաւ դադրեցաւ : Պ. Աղաթոն
խմբագրիչներէն մէկը միւսանգամ լրագիրը
նորոգեց, սակայն քաթալիութեան հակամէտ
ըլլալու հասկածը ծագելով վրան (2), դարձեալ
չյաջողեցաւ : Նոյն վիճակը ունեցաւ

(1) Արշարունեայ ընկերութեան ծախքովը եւ տնօրէնութեան տակը : Ծ. Թ. :

(2) Գերմանացի շարադրողը սա ասանկ կը կարծէ, բայց Հայազգի ընթերցողը բուն իրայ վիճակը լաւագոյն զիտէ : Ծ. Թ. :

նաև «Նոյեան Աղաւնին» (հրատարակիչներն են Ապրոյեան և Մարկոսեան Պարոնայր), որուն տեղը հիմայ «Մասիս» կամ Արարատ լրագիրը կը բռնէ : Ասլրագիրներէն զատ, որ Տաճկաց լրագիրներուն սիս շարաթը մէյմը կ'ելլեն, Պօլիս երկու ամսական թերթեր ալ կ'ընծայեցուցանէ : Առաջինը «Բանասէր» (շիտէրադօր) իրեն սահմանին մէջ առած կը խօսի ուսումնական նոր գիւտերու, քաղաքականութեան և ազգային տնտեսութեան վրայ. ասիկայ միայն 1851 երորդ տարին գոյութիւն տնեցու : Ամսական երկրորդ թերթն է «Բուրաստան» (տէր Պրամէկկարդէն) որն որ յատկապէս միայն ուսումնական նկարագիր ունի : Տաճկաստանի ուրիշ երկու քաղաքներ ալ հայկական լրագիր ունին : Փոքր Ասիոյ Իլնիմիդ (Նիկոմիդիա) քաղաքը 1849 թուականէն սկսեալ «Հայրենասէր» (Բադրիօյ) լրագիրը կ'ելլէ : Զմիւռնիա ունի իրեն «Արշաղոյս Արարատեան» լրագիրը (Մօրկէնրէօրէ տէս Սյարադ), 1840 թուականէն սկսած, որ Հայոց սուլի մեծ լրագիրն է, և ընդարձակ արուումն մինչև Ռուսաստան և Արևելեան Հնդկաստան գտած է : Իր հիմնարկուն է Պալտազարեան Պ. Ղուկաս, որն որ ցարդ խկ խմբագրութիւնը կը տնօրինէ : Առաջ շարաթը անգամ մը կը հրատարակուէր, սակայն մեծ հրայրեացքէն ետքը որ 1845ին Զմիւռնիա անասրատ դարձուցինքը ղինքը երկու շարաթը հեղմը ելլերու սահմանաւորեց : Երբոր Ալիւհանայի Հաթթի շէրիֆը ամէն ազգի հպատակայ Տէրութեան սաշտօններու մէջ միջամուտ ըլլալու ընդունակութիւնը սահմանեց, Աստանդնուսօլոսոյ Հայոց մէջէն

երեւելի և հարուստ շատ անձինք՝ իրենց ազգակիցները առ առջևնին նոր բացուած ասարիքին նախապատրաստելու համար առ դադարիարը յօրինեցին որ զիրենք Եւրոսրայի դործոց ընդհանուր ընթացիցը, կրթեալ ազգաց օրէնքներուն, կարգադրութեանցը, ուսումնական դիւտերուն և այլն և այլն, որչափ հնար է տեղեակ ծանօթ ընեն : Աս դադարիարի կատարումը և առ այն հասնելու համար հարկաւոր եղած դրամը Ա իննսայի Մխիթարեանց յանձնուեցաւ, որոնք 1847 ին «Եւրոսրայ» շարաթական րազիրը յօրինեցին : Ա Ենետիկոյ մէջ Մխիթարեանք, 1843 էն սկսեալ երկու ամիսը անգամ մը ելլող (1) գրութիւն մը հրատարակեցին, որուն «Բազմամէս» (Ֆիլլիսաէր) վերնագիրը արդէն ըստ բուսականին մէջը պարսկական ձևովը կը ծանուցանէ : Ուստիոյ Կովկասեան գաւառներու մէջ Տիգլիս քաղաքը՝ երկու րազիրներու կեանք տուաւ : Մէկն է ուսումնական և քաղաքական րազիրը «Կովկաս» անուն, որ 1846 թուականէն մինչև 1848ը ստորեցաւ, միւսն «Արարատ» որ 1851 թուականին իր խմբագրիչ Պատկանեան Տ. Պարրիէլին ճանապարհորդութեամբը վերջ առաւ : Արեւելեան Հնդկաստանի մէջ Կալկաթա քաղաքը 1845 էն մինչև 1849 «Ազգասէր» (Բարրիոյ) րազիրը ունեցաւ. Մատրաս՝ «Բանասէր» րազիրը, որ 1848 ին երեւան ելաւ, բաց միայն մէկ տարի դիմացաւ, որովհետև իրեն խիստ դատարն նութիւններովը (քրիպիք) և բուռն սաստերովը

(1) Պիտի ըլլաց ամիսը երկու անգամ : Ծ. Թ. :

Հասարակաց տնտեսութիւնը զրգոնեց : Արեւմտապէս
Հնդկային Արքիպելագոսի մէջ, Արեւելեան Հնդ-
կաստանէն հոն եկած գաղթականութիւնը իրեն
հետ Սինկափուր քաղաքը շրջաբերական լրագիր
մը փոխադրեց, զորն որ երկու ամիսը անգամ մը
հրատարակուած « Ուսումնասէր լրագիրը (Ֆրայնտ
տէս ունդէրրիխտս) » կը ներկայացնէ :

Յայժմ համրածներնուս վրայ աւելցնել պէտք է
« Շտեմարան օգտակար դիտելեաց » կրօնական
դիտումն ունեցող ուսումնական լրագիրն ալ, որ
Անգղիանցի բողոքական քարոզչաց առաջնորդու-
թեամբ և ծախքովն 1839 թուականէն մինչև 1843
Զմիւռնիոյ մէջ հրատարակուեցաւ. դարձեալ « Հայ-
րենասէր լրագիրը զորն որ Պ. Մէլիք Մելումեանց
1843 էն մինչև 1845 նոյն քաղքին մէջ հրատարա-
կեց, վերջապէս Կոստանդնուպօլսոյ « Ազդարար
Բիւզանդեան » լրագիրը Պ. Խաչիկ Ոսկանեանէն ի
լոյս ընծայուած և որն որ քանի մը ամիս միայն
կայացաւ : Արդ 1812 թուականէն մինչև և ցայժմ
ընդ ամէնը քսան և մէկ լրագիր հրատարակուե-
ցաւ, մէջը չառնելով « Դարապատում » և Եղանակ
Թերթերը (1) որ առանց սրայմանեալ ժամա-
նակակէտ մը ունենալու կ'էլլեն : Աս ամէն
լրագիրներէն միայն վեցը ի կայի և ի հաս-

(1) Հեղինակը « աննային » եւ « Մօտէ » կը
դնէ, եւ չխմայուիր թէ ինչ կուզէ հասկցնել, մենք
գուշակելով միայն Դարապատում եւ Եղանակ
Թարգմանեցիներ, բայց չենք կրնար երաշխաւորու-
թիւն մը տալ :

տատութեան են. այս ինքն « Արշալոյս Արարատեան՝ » ի Զմիւռնիա, « Բաղմալիս » ի Վենետիկ, « Եւրոպա » ի Վիէննա, « Բուրաստան » և « Մասիս » ի Կոստանդնուպօլիս, Ուսումնասէր ի Սինկափուր: Ետքի իրեքը շատոնց չեղած ըլլալնուն և ժամանակի փորձին տակ տակաւին փորձուած չըլլանուն համար չկրնար գուշակուիլ թէ մէջերնին որչափ կենսական զօրութիւն ունին: Միայն առջի իրեք լրագիրները այնչափ երկայն ընթացք մը ըրին, որ իրենց գոյութիւնը կամ կեանքը ալ իրր ապահովցած կ'երեւայ: Վիէննա և Վենետիկ ելած երկու լրագիրներուն ալ յաջողութիւնը իրենց խմբագրութեան գերազանցութիւնն է, իսկ Զմիւռնեան յաջողութիւնը տուած առեւտրական լուրերուն կարեւորութիւնն է, որոնց համար աս լրագիրը ընդհանրապէս առեւտրոյ հետեւող հայազգի ժողովրդեանը հարկաւոր սխտոյք մը եղած է: Մինչեւ հիմայ հրատարակուած լրագիրներու գրեթէ կէսը Կոստանդնուպօլիս քաղաքը դուրս տուաւ, այսու ամենայնիւ հոն հրատարակուած թերթերը՝ պզտի քաղաքներու մէջ հրատարակուածներէն աւելի երկայն տեւողութիւն մը չունեցան: Պօլսոյ լրագիրներուն կեանքին միջին տեւականութիւնն է 18 ամիսէն մինչեւ երկու տարի, և ցայժմ ասկէց աւելի շատ չապրեցան: Հայերէն լրագրաց այսպէս ստէպ ստէպ դադրիլը նշան մըն է թէ, լրագիր կարդալու սովորութիւնը տակաւին Հայոց ժողովրդեան մէջ արմատ չէ ձգած, ինչպէս նաեւ ուրիշ կողմանէ ալ լրագիր հրատարակելու ձեռնարկութիւնները չյաջողելէն ետքը՝ ետեւէ ետեւ միօրինակ նոր լրագիրներ կ'ըստը

գովելի եռանդեան և ազգասիրութեան ապացոյց է : Ազգին ընտիրները ձեռնտու են և կը սիրեն մամուլը, սակայն աս ընտիրները թուով չատքիչ են, և չեն ձեռնհաս կրթեալ ազգաց ունեցած մամուլներուն չափ՝ իրենց Հայոց ազգին բազմաթիւ տարտաններ տալ : Հայոց մտաւորական կեանքին վրայ մեծ ազդեցութիւն ունին ընկերութիւնները և զարոյցական հիմնարկութիւնները, որ Հայոց բնական գրեթէ ամէն տեղերը կը գտնուին : Հիմնարկութեանց մէջ առջի կարգը կը համարուին Ուսումնարաններն, որոնց մէջ գէթ կարեւորագոյն եւ նշանաւորներն պէտք է մեր ընթերցողներուն յիշատակել : Մտկուացի մէջ արեւելեան լեզուաց Ազգարեան ձեմարանը (Ազգարէվաքի ինսթիթուդ վուդօ շնիխ եազիքով) թէ՛ հրնութեան թէ՛ մէջը սորուած բարձրագոյն ուսմանցը համար, ինչպէս նաև մինչեւ հիմայ ըրած արդեանց նկատմամբ նշանաւոր է : Ազգարեանց ազգատուհմը Հայոց երեւելի գերդաստաններէն մէկն է որ Ալիլիկիոյ մէջ իշխանապետութիւն մը ունէր, աս ազնուատուհմ գերդաստանը Երասխայ Հայազգի բնակչացը հետ Իսպահան փոխադրուեցաւ, ուր մեծագանձ փարթամութիւն բարդեց ստացաւ : Ազգարեաններէն մէկը որ Նատը Գահին ժամանակ դրամահատութեան նախարար (միւնցմիխար) եւ Չուզայի գահերէց էր, նոյն այս Հայոց արուարձանին մէջ իրեն ազգակցացը համար երկու հոյսկապ կարաւանի օթեւաններ շինեց, որ իրեն 100,000 (1) թաղերի նստեցան : Նատը Գահին

(1) Կ'ընէ 1,572,500 զուռուշ :

մահուանէն ետքը եղած խոտլութեան ժամանակ
առ ազգասէր անձը Ռուսաստան փախաւ, ուր
մետաբար եւ բանբակի մեծակառոյց գործարաններ
չինեց, տէրութեան եկամուտի հաշուին համար կա-
րէւոր գործքերի զլուխ հանեց, եւ Խզլար, Մօզլուս, **Գրիգորիտապօլիս** եւ **Նոր-Նախշուան** քաղաքներուն
չինուելուն գործունեաց կերպիւ մասնակից եղաւ :
Եղիազարաց եւ իւր **Յովհաննէս** որդւոյն հրաւիրա-
նօք հայազգի գաղթականներ եկան Ռուսաստան
չուեցին եւ **Սեւ** ծովուն հիւսիսային կողմը եղած
երկիրները մշակելու ձեռք զարկին, որ նոյն
առեւը տակաւին անասպատ ամացի եւ ճահիճներով
բնցուած էր, իսկ հիմաց առատ հունձք կը բերեն :
Յովհաննէս մեռաւ 1813 ին, եւ իր անհուն ստացուա-
ցոց մէկ մասը կարգեց հիմնարկութեան մը համար,
որուն մէջ Ռուսաստանի Հայերը համաձայն ան
ընկերութեան յառաջագիտութեանցը որուն մէջը
որ կը գտնուին՝ կրթութիւն մը ստանան, եւ ամէն
աստիճաններու կամ պաշտօններու մէջ մուտ
գտնալու իրենց առաջնորդէ : Իրեն ժառանգը
Ռսուլմարանին համար կարգեալ զրամը աւելցուց
մինչեւ 500,000 թալէր. հիմաց նորանոր ընծաներ
վրան աւելցունելով՝ հիմնարկութիւնը մէկ միլիոնէն
աւելի զրամ ունի : **Լազարեանց** ռսուլմարանը
1815 թուականին սկսաւ եւ 1848 Նոյեմբեր
2ին (14) կայսերական հրովարտակով **Լոսարանի**
աստիճան, եւ ազնուական պատանիներ զինուո-
րութեան մէջ կրթելու ռսուլմարանին (քու-
տէդէկանչարդ) երկրորդ դասը ստացաւ : Ռսուլ-
մարանը հոգևորական կրթութեան նախարարին

կառավարութեան տակն է (1), եւ կը կառավարուի Ազգարեանց ազգատոհմին մէջը եղող գլխաւորէն, եւ Ապսեր կողմանէ լիակատար իշխանութիւն ունեցող անձէ մը, որն որ Հիմնց Օրո՛Ֆ կոմսն է : Ուսումը որ քսան եւ երկու ուսուցչաց մէջ բաժնուած է, մէջը կը սարսիակէ Սուրբ զրոյ պատմութիւն, յունական եւ հայկական ծիսի կրօնագիտութիւն, ուսերէն քերականութիւն, պատմութիւն եւ աշխարհագրութիւն, վիճակագրութիւն, բանասիրական ուսմունք, տրամաբանութիւն, մաթէմատիկեան եւ բնագիտական գիտութիւնները, լատիներէն, գերմաներէն եւ գաղղիերէն լեզուները. իսկ արեւելեան լեզուաց մէջէն հայերէն, վրացերէն, արաբերէն, սլաւոներէն եւ տաճկերէն : Ար նպատակն է ոչ միայն քաղաքական եւ զինուորական սրաշտմանց համար աշակերտներ ստորաստել, այլ նաեւ գլխաւորաբար Ռուսիոյ՝ Ասիայի հետ ունեցած քաղաքականութեան եւ վաճառականութեան ամէն տեսակ իրողութեանցը համար թարգմաններ հանել, եւ տէրութեան մէջ գտնուած Հայ դպրատուններու եւ եկեղեցեաց համար ուսուցիչներ եւ քահանայք մատակարարել : Որքոյ եւ աղքատ տղոց համար յիսուն ճրի տեղեր կան, եւ ուսումնարանին առատաձեռնութիւնը սա կարօտելոյ վրայ կը տարածուի այնչափ ժամանակ մինչեւ որ կենաց մէջ ապահով վիճակ մը իրենց գտնեն :

Վենետիոյ Մխիթարեանց կառավարութեան

(1) Պատիւը Ս. զգային լուսաւորութեան սրաշտմանէն տակ : Ծ. Թ. :

տակ եղած երկու վարժարաններու մէջն ալ կրթութիւնը գլխաւորաբար աւելի ազգայիննկատմունքով կ'ըլլուի, այսինքն թէպէտ եւ ըստ ինքեան մէջի կրթութիւնը եւրոպական է, սակայն առաւելագոյնս համաձայնուած է ան պիտոյից եւ սրահանջմանցը՝ զորն որ մէջի տղարը Արեւելք իրենց ազգակցացը մէջ պիտի ունենան : Աս երկու վարժարաններուն մէկն է Վենետիկոյ Ռաֆայէլեան Վարժարանը՝ որն որ Եղուարդ Ռաֆայէլ Ղարամեան Մատրասի վաճառականի մը առատաձեռնութեամբ կարգեցաւ. երկրորդն է Սամուէլ Մուրատեան վարժարանը՝ որ յառաջագոյն Բատուա էր, եւ շուրջ 10 տարի կ'ըլլայ քանի որ Բարիզ փոխադրուեցաւ : Աս վարժարանը հաստատող ազնուական Բարբարը իր ընչից հինգերորդ մասը, այս ինք 175,000 փաւրն սթէրլին (1) վարժարանին նուիրեց : Երկու վարժարաններու մէջ կրթութիւնը մի եւ նոյն է եւ նպատակ ունին գրականութիւն եւ վիճակի դիտութիւնները : Սղբատ տղաք ճրի կ'առնուին, սակայն այսու սրայմանաւ որ իրենց հայրենիքը դառնան եւ համբարած ուսմունքնին տարածեն և կամ դէթ համարումը եւ սէրը բորբոքեն խօթեն : Ռաֆայէլեան վարժարանը երեսունէն մինչեւ երեսունը հինգ աշակերտ կ'ընդունի, իսկ Սամուէլ Մուրատեան վարժարանը հիմազ վաթսուն աշակերտ ունի, որ Հայոց երկու դաւանութիւններէն ալ կ'առնուին : Վիճննայի Միթիթարեանք Եօզէֆթատթ արուարձանին մէջ եղած վանքերնուն մէջ կը գրադին իրենց յանձ-

(1) 24,500,000 դուրուշ :

նուած տղայ հայերը, որոնք կէս մը Տաճկաստանի այլ եւ այլ գաւառներէ եւ կէսմ^ը ալ Ղանուբեան իշխանութիւններէ եկած են՝ եւրոպական մէթոտով վարժել :

Օսմանեան պետութեան ինչպէս նաեւ Ռուսաստանի Արմիլիասեան գաւառներու մէջ բաւական հայազգի բնակչով քաղաք մը չկայ, ուր աս ազգը պատրաստողական կամ ուրիշ տեսակ դպրոցներ հաստատած չըլլայ : Աս ուսումնարանները հասարակօրէն եկեղեցիներու եւ վանքերու շրջակաները շինուած են եւ եկեղեցականներէ կը կառավարուին : Ծախքը ազգասիրական ընկերութիւնները կը մատակարարեն : Կան քանի մը դպրոցներ որոնց մէջ երկու սեռի մանկուծք ալ խառն կ'ընդունուին, քանի որ դեռ մատաղօրեայ են, ուրիշ դպրոցներ ալ կան որ կտրիճ տղոց եւ աղջկանց համար զատ սենեակներ եւ վարժապետներ ունին, կան նաեւ որ միայն աղջկանց համար որոշուած են : Բայց դպրոց դացող աղջկանց թիւը շատ չափաւոր է, իրենց ուսումը կը կայանայ գիտնալ քրիստոնէականի առջի սկզբունքները, քերականութիւն եւ ասղնագործութիւն եւ շատ կանուխ կը վերջանայ : Ուսման այսպէս կանուխ ընդհատութիւնը անկէց է, որովհետեւ մարք իրենց զաւակներէն բաժնուիլը չեն ուզեր, երկրորդ պատճառն է Արեւելքի մէջ խորունկ արմատացած նախապաշարումը որ զիրենք միայն կանանոցի եւ տնական գործոց կը դատապարտէ : Տաճկաստանի քաղաքները որոնց մէջ Հայերը ուսման առաւելագոյնս յաւաճադիւնութիւն ըրած են՝ հետեւեալներն

են. Եւրոպայի մէջ՝ Պուքարէշթ, Ադրիանուպօլիս եւ Վլաոնա (1). Ասիոյ մէջ՝ Կեսարիա, Սերաստիա, Եւզոսիա, Պուքա, Զմիւռնիա, Կարին, Խարբուրդ, Մուշ, Վան եւ Բայբերդ : Ռուսաց տակեղոզ երկիրներու մէջ՝ Տիպիա, Լորի, եւ Քութայիս բաղաբները ուամամբ յառաջադէմ են : Եջմիածնայ Կաթողիկոսարանին մէջ, Հայոց մէջ մեծապէս ի համբաւի եղոզ կղերանոց (սէմիւնէր) մը կայ, ուր աշակերտները աստուածարանական սկզբունքներէ սկսեալ մինչեւ ան դիտութեանց կը հասնին, որոնք իրենց Աստուածարանի աստիճան կը շնորհեն :

Կոստանդնուպօլիս իրեն արուարձանները եւ Բոսփորոսի երկկողմեան եղերքները մէջն առնելով, հայերէն երեսուն եւ ութը դպրոցներ եւ վարժարաններ ունի: Երեսուն եւ իններորդն Սիլւատարի Սուրբ Խաչի ըսուած վարժարանն է, որ նորերս հրդեհով սարուեցաւ, եւ նոյն արուարձանի մէջ եղոզ Ս. Երուսաղէմայ վարժարանին հետ միացաւ : Աս բոլոր դպրոցներուն մէջ եղած աշակերտներուն թիւն է 6,500 էն մինչեւ 7,000 : Եթէ ուսանողաց աս թիւը Կոստանդնուպօլսոյ բոլոր հայազգի բնակչացը հետ համեմատուելու որ ըլլայ, մէջերնէն հարիւրին երկու եւ կէսը կամ 3 ուսանող կ'ելլէ. այս Եւրոպայի ամենակրթեալ ազգացը հետ բաղդատե-

(1) Կ'երեւայ որ հեղինակին անձանօթ են Մոլտաւիայի ազգային դպրոցները, որոնց մէջ մանաւանդ Եաշ եւ Պոթուշան քաղաքներուն դպրոցները ազգերնուս ամենէն բարեկարգ դպրոցներու կարգը դրուելու իրաւունք ունին : Մ. Թ. :

լով դպրատուն զացողներուն աս թիւը նուազ եւ տկար է, սակայն սակաւութեան սրատճառն է նախ՝ որովհետեւ դեռ քիչ ժամանակ է քանի որ Հայոց մէջ ուսումս որուեցնելու աւելի կարգաւորեալ կերպը մուտ գտաւ. երկրորդ պատճառն է՝ տղաքը մօրերնուն բովը սրահելու սովորութիւնը, եւ երրորդ՝ որովհետեւ սոսկականները տակաւին ցայսօր ուսումնական յառաջադիմութեան դեռ մասնակից չեն եղած, հեռու կը կենան : Ուսմանց ծրագիրը՝ (ըլան) որոնց համաձայն դպրոցները կ'ուզուին, աս դպրոցներուն հանգամանքէն կախուած է. ըստ այսմ եթէ դպրոցը մեծ է՝ ուսման ծրագիրն ալ ընդարձակ կ'ըլլայ. իսկ եթէ դպրոցը սղտիկ է, ուսումն ալ սեղմեալ կ'առնուի. սակայն իրենց ուսման ունեցած ամենէն ընդարձակ ծրագիրն առնելով, մէջը պարսիակուած կը գտնանք ազգային կրթութենէ զատ՝ որ ամէն դպրոցաց հասարակ է, նաեւ գրաբառ լեզուն, տաճկերէն, նորյունարէն, գաղղիերէն եւ խոսակերէն լեզուները, մաթէմատիկայ եւ երկրաչափութիւն, բնական գիտութեանց սկզբունքները, երաժշտութիւն եւ նկարչութիւն : Սրբոյն Պետրոսի եւ Պօղոսի կղերանոցին մէջ, զորն որ Գաթուղիկ Նախագահ Հասուն Գերապայծառը Բերայի մէջ հաստատեց, եւ որն որ թէ աշխարհականաց եւ թէ՛ կղերականաց դպրոց է, աս ուսմունքները տասը տարի կը տեւեն, եւ քահանայութեան որոշուած աշակերտաց համար Աստուածարանութեան դասաւարտութեամբ կը վերջանան . Եւտի Գուլէ Ազգային հիւանդանոցը, որուն մէջ հիւանդներ, աղրատ եւ ցնորեալներ կ'առ-

նուին, ունի նաեւ դպրոց մը, որ միանգամայն որբոց տուն եւ անպատասպարան տղոց խրատուց տեղի է : Առատանդնուպօղոց մէջ Հայոց կարեւորագոյն ուսումնարանն է պատրիարքարանի քով սուրբ Սահակեան ուսումնարանը, որ թէ՛ աշակերտաց բազմութեան եւ թէ՛ մէջը աւանդուած բարձրագոյն ուսմանցը համար նշանաւոր է : Սրդ մինչեւ ցայժմ դատարննած չըջանալիներնէս դուրս՝ Ասիայի մէկալ տեղերուն վրայ ճիշտ տեղեկութիւնները մեզի կը պակսին : Պարսկաստանի մէջ ծանօթ է մեզի միայն Զուղայի վարժարանը որ Փրկիչ եկեղեցւոյն կը վերաբերի եւ Սամեան գերդաստանին անունը կը կրէ, որ վարժարանը հաստատեց եւ իրեն հաս կապեց. դարձեալ Ապրիլիայի մէջ ազջկանց դպրոցը եւ « Հայկազեան մարդասիրական ճեմարանը » որոնցմէ ետքինը շուրջ յիսուն վաթսուն աշակերտ կ'ընդունի :

Ահաւասիկ ասոնք են հիմնաւորան Հայ ժողովրդեան նկարագիրն եւ կարգադրութիւնները : Պատերազմը՝ որ Ռուսիոյ եւ Դրան մէջ գրգռուեցաւ, եւ որուն մէջ այժմ՝ Արեւմտեան տէրութիւններն ալ միջամուտ եղան, աս ժողովուրդը մեզի առաջ ուրնէ՛ աւելի հետաքրքրական կարեւոր կ'ընէ : Իրենց մեծագոյն մասը ընդ միտեանս ճակատող երկու տէրութեանցը մէջ բաժնուած է, եւ երկուքին ալ թէպէտեւ անխմանալի կերպիւ, սակայն ազդու կերպիւ նպաստաւորութիւն կը մատուցանէ. Օսմանեան պետութեան մէջ, Հայերը ելեւմտից աջողակութիւն մը եւ իրենց յատուկ եղող առեւտրոց իրութեանց հմտութիւնը՝ Տէրութեան առջեւը գոր-

ծածուկերու եւ ի պատրաստի կ'ընծայեցուցանեն :
 Ռուսաստանի մէջ, դործունեայ եւն Հայագգի քաջ
 զօրավարներ — վերը անուանեցինք զիրենք — եւ
 էջմիածնայ Սրբազան Աթողիկոսին ազգու ճոխու-
 թիւնը՝ թէ որ զայն շնորհել միայն ուզելու որ ըլլայ :
 Խաղը՝ զորն որ աս պատերազմիա մէջ Հայերը
 խաղալու իրենք զիրենք որոշեն, մեծ կարեւորու-
 թիւն պիտի ունենայ : Սակայն քուէն կամ որոշում
 նին ինչպէս իցնալու ալ որ իցնայ, աս ի վազուց
 կեղեքուած Ազգը անշուշտ նոր ասպազայի մը կը
 մօտիկնայ, եւ ինքը պիտի չըլլայ ետքինը, որ Տաճ-
 կաստանի հպատակ ազգերուն ազատութենէն
 օգտակար եւ պատուաւոր դործածութիւն մ'ընէ :
 Նա եւ Հռովմայիսկ հետ միաբանելու փորձերը, թէ
 այժմ նորէն պիտի սկսին, արդէն իսկ յայտարար
 ստոյգ նշաններ կան (1) :

(1) Մինչեւ ցայժմ ըրած շատ գեղեցիկ եւ
 ըստ մեծի մասին ամենաստոյգ դիտողութեանց
 քով, աս ետքի պարբերութեան մէջ հեղինակը ծան-
 րապէս կը սխալի. որովհետեւ, ինչպէս ամէնքնիս ալ
 գիտենք, Հռովմայ հետ միաբանելու կարելիու-
 թիւնը, երբէք աս աստիճան անկարելիութիւն չէ
 եղած ինչպէս որ այսօրուան օրս է, եւ ընդ վայր
 բանդազուչանայ կարգը համարելի :



80k.

904

